

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3.

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի բնական գիտությունների ֆակուլտետի խորհրդի նիստի

29 հոկտեմբերի 2015թ.

Նախագահ՝ Մ. Ա. Զաքարյան

Քարտուղար՝ Հ. Ս. Գասպարյան

Նիստին մասնակցում էին խորհրդի 11 անդամներ: Հրավիրվել էր նաև մասնաճյուղի գիտքարտուղար Մ. Ս. Աթոյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. Ֆակուլտետի կանոնադրության քննարկում և հաստատում:
/զեկ. Մ. Ա. Զաքարյան/
2. 2015-16 ուստարվա I կիսամյակի I ընթացիկ քննությունների և ստուգումների արդյունքների ամփոփում:
/զեկ. Մ. Ա. Զաքարյան/
3. Ինֆորմացիոն տեխնոլոգիաների արդյունավետ օգտագործման վիճակի քննարկում:
/զեկ. Ք. Վ. Օթարյան/
4. Այլ հարցեր:

ԼՍԵՑԻՆ- Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկանի Ժ/պ, խորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը: Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում էր Մ. Ա. Զաքարյանը:

Օրակարգի առաջին հարցի մասին հանդես եկավ խորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը: Նա ներկայացրեց ֆակուլտետի կանոնադրությունը: Այնուհետև ձայնը տրվեց մասնաճյուղի գիտխորհրդի քարտուղար Մ. Ս. Աթոյանին: Նա որոշ հարցեր պարզաբանեց կապված ֆակուլտետի կանոնադրության հետ: Լայն քննարկումից հետո նիստի մասնակիցների կողմից արժանացավ հավանության և որոշեցին ներկայացնել մասնաճյուղի գիտխորհրդի հաստատմանը:

ՈՐՈՇԵՑԻՆ- Ֆակուլտետի կանոնադրությունը ներկայացնել մասնաճյուղի գիտխորհրդի հաստատմանը:

Օրակարգի երկրորդ հարցի մասին գիտխորհրդի նախագահը ներկայացրեց 2015-16 ուստարվա I ընթացիկ քննությունների և ստուգումների արդյունքները

/ամփոփ տվյալները կցվում են արձանագրության տեքստին/: Ձեկուցողը ամբիոններին տվեց ընդհանուր հանձնարարական ուսումնական գործընթացի վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-«Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության» ամբիոնի վարիչի ժ/պ Ա. Վ. Յուցուլյանը: Նա համակարծիք էր ներկայացված նյութին, միաժամանակ ներկայացնելով, որ կազմակերպվում են լրացուցիչ պարապմունքներ:

ՈՐՈՇԵՑԻՆ- 1. Հանձնարարել ամբիոններին, որ երկրորդ ընթացիկ քննությունների հարցաշարերը ժամանակին տրվեն ուսանողներին:

Օրակարգի երկրորդ հարցի մասին հանդես եկավ ֆակուլտետի համակարգչային մասնագիտական լաբորատորիայի վարիչ Ք. Վ. Օթարյանը: Նա ներկայացրեց, որ ֆակուլտետում գործում է համակարգչային մասնագիտական լաբորատորիաներ՝ թ. 1 և 2: Տեղեկատվական տեխնոլոգիաների ընդլայնված արդյունավետ օգտագործման վիճակը ֆակուլտետում կայուն է: Ուսանողներին ըստ մասնագիտությունների ցուցաբերվում է խորհրդատվական աջակցություն: Ապահովվում է նաև ծրագրային և տեխնիկական անհրաժեշտությունը: Լաբորատորիաներում գործում է նաև ներքին ցանց և անվճար ինտերնետ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Գ. Վ. Գուլակյանը, Հ. Ս. Գասպարյանը: Նրանք կարևորեցին համակարգչային մասնագիտական լաբորատորիայի դերը ֆակուլտետի տեղեկատվական տեխնոլոգիաների ընդլայնված և արդյունավետ օգտագործման գործում: Խորհրդի անդամները բարձր գնահատեցին ֆակուլտետի դերը մասնաճյուղի տեղեկատվական տեխնոլոգիաների ընդլայնված և արդյունավետ օգտագործման առաջընթացի գործում:

Օրակարգի չորրորդ հարցի մասին անցկացվեց ներֆակուլտետային ուսումնական գործընթացի վերաբերյալ քննարկումներ:

**ՆԱԽԱԳԱՀ
ՔԱՐՏՈՒՂԱՐ**

**Մ. Ա. ԶԱՔԱՐՅԱՆ
Հ. Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ**